Հավելված N 24
ՀՀ կառավարության 2013 թվականի
հունիսի 6-ի N 598 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀՀ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ, ՓՈԽԱԴՐՄԱՆ, ՏԵՂԱՓՈԽՄԱՆ, ԱՎԱՐՏՄԱՆ ԿԱՐԳԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՇԱՐԺԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

_____ _____
ստուգող մարմնի հասցեն հեռախոսը

Անձնական կոդը	պաշտոնը	ազգանունը, անունը, հայրանունը
Անձնական կոդը	պաշտոնը	ազգանունը, անունը, հայրանունը
Անձնական կոդը	պաշտոնը	ազգանունը, անունը, հայրանունը

Ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ _____ _____ 20___ թ., ավարտը՝ _____ _____ 20___ թ.

_____
Ստուգվող սուբյեկտի անվանումը, իրավական տեսակը

_____ ՀՎՀՀ
Պետ. ռեգիստրի գրանցման համարը, ամսաթիվը

_____ _____
Ստուգվող սուբյեկտի հասցեն Հեռախոսը

_____ _____
Ստուգվող սուբյեկտի ղեկավարի կամ վստահված անձի ազգանունը, անունը, հայրանունը Հեռախոսը

Ստուգման հանձնարարագրի համարը՝ _____ տրված՝ _____ կողմից՝ ____ ____ 20__ թ.

Ստուգման նպատակը, ընդգրկված հարցերի համարները՝
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Հ.հ.	Հարց	Պատասխան
1.	Ստուգվող սուբյեկտի կայքի, էլեկտրոնային փոստի հասցեները	
2.	Իրականացվող կրթական ծրագրերը	
3.	Սովորողների թիվը տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ	
4.	Սովորողների փաստացի թիվը ստուգման պահին	
5.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների թիվը	
6.	Նախորդ ուստարում աշխատանքից ազատված ուսուցիչների թիվը	
7.	Ընթացիկ ուստարում աշխատանքից ազատված ուսուցիչների թիվը	
8.	Նախորդ ուստարում աշխատանքի ընդունված ուսուցիչների թիվը	
9.	Ընթացիկ ուստարում աշխատանքի ընդունված ուսուցիչների թիվը	
10.	Նախորդ ուստարում աշխատանքից ազատված վարպետների թիվը	
11.	Ընթացիկ ուստարում աշխատանքից ազատված վարպետների թիվը	
12.	Նախորդ ուստարում աշխատանքի ընդունված վարպետների թիվը	
13.	Ընթացիկ ուստարում աշխատանքի ընդունված վարպետների թիվը	
14.	Փոխտնօրենների թիվը (նշել պաշտոնները)	
15.	Ուսուցիչների թիվը	
16.	Ատեստավորված ուսուցիչների թիվը	
17.	Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը	
18.	Վարպետների թիվը	
19.	Լաբորանտների թիվը	
20.	Գրադարանավարների թիվը	

ՀԱՐՑԱՇԱՐ

ՀՀ կրթության պետական տեսչության կողմից նախնական մասնագիտական (արհեստագործական) ծրագրեր իրականացնող կազմակերպության ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտման կարգերին համապատասխան՝ սովորողների շարժի վերաբերյալ իրականացվող ստուգումների

հ.հ.	Հարց	Հղում նորմատիվ իրավական ակտին	Այո	Ոչ	Չ/Պ	Կշիռ	Ստուգման տեսակը	Մեկնաբանություն
1	Ուսումնական հաստատության կողմց արհեստագործական կրթական ծրագրով ընդունելության հայտարարությունը տրվել է լիցենզիայի առկայությամբ:	-ՆՄ և ՄՄ կրթության մասին ՀՀ օրենք, 11-րդ հոդված 2-րդ մաս				**3**	փաստաթղթային	
2	Պահպանվել է ավարտական փաստաթուղթը հավատարմագրված մասնագիտությունների գծով ուսումնական հաստատություններում հաջորդ աստիճանի կրթություն ստանալու համար պարտադիր պայմանը:	ԿՄՕ 44-րդ հոդված, 4-րդ մաս				**3**	փաստաթղթային	
3.1	Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններում սովորողների ընդունելությունն առկա (ստացիոնար) ուսուցմամբ իրականացվել է առնվազն հիմնական ընդհանուր կրթություն ունեցող անձանց դիմումներով, օրենսդրությամբ սահմանված կարգով *(սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը),* հիմնադրի սահմանած պահանջներին համապատասխան՝ առանց ընդունելության քննությունների՝ մրցութային հիմունքներով:	ԿՄՕ հոդված 15, 1-ին կետ, ՆՄ և ՄՄ կրթության մասին ՀՀ օրենք, հոդված 11, 1-ին, 4-րդ մասեր, ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. №254-Ն հրաման, 2-րդ,3-րդ,4-րդ կետեր				**1**	փաստաթղթային	
3.2	Պահպանվել է Հայաստանի Հանրապետության երկքաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամ օտարերկրացիների համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պայմաններով, իրենց ընտրությամբ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվելու իրավունքը:	ԿՄՕ հոդված 15, 1-ին կետ ՆՄ և ՄՄ կրթության մասին ՀՀ օրենք, հոդված 11, 1-ին, 4-րդ մասեր, ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. №254-Ն հրաման, 2-րդ,3-րդ,4-րդ կետեր				**1**	փաստաթղթային	
Ուսումնական հաստատությունում ընդունելության գործընթացն նախապատրաստվել, կազմակերպվել և իրականացվել է կարգով սահմանված հետևյալ ժամկետներին համապատասխան.		ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. №254-Ն հրաման				**0**		

4	Ընդունելության գործընթացը կազմակերպելու նպատակով՝ Լիազորված մարմնի կողմից ընդունելության տեղերը հատկացվելուց հետո՝ 3 օրվա ընթացքում Հաստատության ղեկավարի հրամանով ստեղծվել է ընդունող հանձնաժողով (հանձնաժողովի նախագահը՝ Հաստատության տնօրենը (ռեկտորը), նախագահի տեղակալը, պատասխանատու քարտուղարը և անդամները) և ընդունելության գործընթացը սպասարկող տեխնիկական անձնակազմ:	ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. №254-Ն հրաման, 9-րդ, 10-րդ կետեր				**1**	փաստաթղթային	
5	Լիազորված մարմնի կողմից ընդունելության տեղերը հատկացվելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվել է ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարությունը,	ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. №254-Ն հրաման, 6-րդ կետ				**1**	փաստաթղթային	
6	Առկա (ստացիոնար) ուսուցման մրցույթին մասնակցելու համար դիմորդի փաստաթղթերն ընդունվել են ընդունելության պայմանների վերաբերյալ հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 25-ը,	ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. №254-Ն հրաման, 7-րդ կետ				**2**	փաստաթղթային	
7	Անվճար և վճարովի ուսուցման տեղերում մրցույթն իրականացվել է օգոստոսի 26-27-ը: Ընդունելության մրցույթի արդյունքները հրապարակվել են Հաստատության տվյալ մասնագիտության մրցույթի արդյունքների ամփոփումից անմիջապես հետո,	ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. №254-Ն հրաման, 8-րդ կետ				**2**	փաստաթղթային	
8	Թափուր տեղերի առկայության դեպքում մրցութային հիմունքով Հաստատություն ընդունվել են ընթացիկ տարում այլ Հաստատություն մրցույթով չանցած այն դիմորդները, որոնք մինչև տվյալ ուսումնական տարվա օգոստոսի 31-ը ներառյալ ներկայացրել են կարգով պահանջված փաստաթղթերը,	ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. №254-Ն հրաման, 25-րդ և 48-րդ կետեր				**1,5**	փաստաթղթային	
9	Ընդունող հանձնաժողովի համապատասխան որոշման և լրիվ ձևակերպված անձնական գործի հիման վրա Հաստատության ղեկավարը մրցույթով անցած դիմորդներին 2 աշխատանքային օրվա ընթացքում հրամանագրել է որպես ուսանող: Հրամանագրվածների	ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. №254-Ն հրաման, 47-րդ կետ				**2**	փաստաթղթային	

	ցուցակները հրապարակվել են ոչ ուշ, քան հրամանագրման հաջորդ օրը:							
10	Հաստատություն չընդունված դիմորդին վերադարձվել են կարգով պահանջված փաստաթղթերը, իսկ դրանց պատճենները պահպանվել են Հաստատությունում 6 ամիս, որից հետո ոչնչացվել են:	ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. №254-Ն հրաման, 52-րդ կետ				**1**	փաստաթղթային	
Ուսումնական հաստատության դիմորդները և նրանց ծնողները (կամ նրանց օրինական ներկայացուցիչները) ծանոթացել են ուսումնական հաստատության լիցենզիային, կանոնադրությանը և ներքին կանոնակարգերին, պետական հավատարմագրման վկայականին (առկայության դեպքում), կնքվելիք պայմանագրին, ինչպես նաև կրթության գործընթացը կարգավորող այլ իրավական ակտերին, որի վերաբերյալ տեղեկությունները գրանցվել են դիմորդի ընդունելության փաստաթղթերում:		ԿՄՕ հոդված 15, 2-րդ կետ ՆՄ և ՄՄ կրթության մասին ՀՀ օրենք, հոդված 11, 3-րդ մաս ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. №254-Ն հրաման, 12-րդ կետի 10-րդ ենթակետ				**0**		
11	Արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատություններում ընդունելությունը կատարվել է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկին և պետական կառավարման լիազորված մարմնի կողմից տվյալ ուսումնական տարվա համար հատկացված՝ առկա(ստացիոնար) ուսուցմամբ անվճար և վճարովի տեղերին համապատասխան:	ԿՄՕ հոդված 21, 2-րդ կետ ՆՄ և ՄՄ կրթության մասին ՀՀ օրենք, 9-րդ հոդված 1-ին մաս, 11-րդ հոդված 5-րդ մաս, ՀՀ կառավարության 12.01.2006թ. №73-Ն որոշում ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. №254-Ն հրաման 5-րդ կետ				**2**	փաստաթղթային	
12	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունը՝ ըստ մասնագիտությունների իրականացվել է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կրթության հիմքին համապատասխան:	ԿՄՕ հոդված 22, 4-րդ կետ				**2**	փաստաթղթային	
13	Ընդունելության պայմանների վերաբերյալ ուսումնական	ՀՀ ԿԳ նախարարի				**1**	փաստաթղթային	

	հաստատության հրապարակած հայտարարությունում ներառված են դիմորդի փաստաթղթերի ընդունման և մրցույթի անցկացման ժամկետները, ինչպես նաև յուրաքանչյուր մասնագիտության՝ կրթության ձևը (առկա կամ հեռակա, հեռավար (դիստանցիոն), դրսեկության) ուսուցման պայմանները, կրթության հիմքը (առնվազն հիմնական կամ միջնակարգ), Լիազորված մարմնի կողմից հատկացված անվճար և վճարովի տեղերի քանակը, ուսման վճարի չափը, ուսման տևողությունը, որակավորումը:	05.04.2012թ. №254-Ն հրաման, 6-րդ կետ						
14	Դիմորդը՝ Հաստատության ընդունող հանձնաժողովին անձամբ, իսկ անչափահաս լինելու դեպքում օրինական ներկայացուցչի (ծնողի, որդեգրողի կամ հոգաբարձուի) հետ ներկայացրել է՝ դիմում (մինչև 2 մասնագիտության հայտագրմամբ՝ մրցույթի առաջին հայտի գերակայության սկզբունքով, անվճար և վճարովի ուսուցման հիմունքով), 4 լուսանկար (3x4 չափսի), կրթության մասին փաստաթղթի բնագիրը կամ պատճենը և անհրաժեշտ այլ փաստաթղթեր	ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. №254-Ն հրաման, 19-րդ և 20-րդ կետեր				**1**	փաստաթղթային	
15	**Ընդունելության մրցույթն անց է կացվել տվյալ ուսումնական հաստատությունում, պետական կառավարման լիազորված մարմնի կողմից ըստ մասնագիտությունների հատկացված անվճար և վճարովի ուսուցման տեղերում՝ կարգով սահմանված ընդունելության մրցույթի հետևյալ սկզբունքների պահպանմամբ՝** *1) Անվճար ուսուցման տեղում առաջին հերթին ընդունվել է կրթության մասին փաստաթղթի գնահատականների միջին թվաբանականի և տվյալ մասնագիտության համար ընդունելության մրցութային առարկաների գնահատականների/միավորների ընդհանուր առավելագույն գումար ունեցող դիմորդը:* *2) մրցութային հավասար միավորներ ունենալու դեպքում ըստ սահմանված հերթականության առավելությունը տրվել է՝*	**ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. №254-Ն հրաման, 23-րդ և 24-րդ կետեր**				**3**	**փաստաթղթային և (կամ) գործընթացքի նկատմամբ վերահսկողություն**	

	ա. մեդալակիր-դիմորդին. *բ. փվյալ մասնագիտությամբ առավել երկարատև մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող դիմորդին.* *գ. պետական բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար քննություններից առավել բարձր գնահատականներ ունեցող դիմորդին.* *դ. փվյալ մասնագիտության գծով բարձրագույն կամ մասնագիտական կրթություն ստացած դիմորդին.* *ե. դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդին.* *զ. կրթության մասին փաստաթղթի գնահատականների առավելագույն միջին թվաբանական ունեցող դիմորդին.* *է. ըստ փվյալ մասնագիտության համար ընդունելության մրցույթային առարկաների ցանկով սահմանված առաջնային համարվող առարկաներից առավել բարձր գնահատականների/միավորների ունեցած դիմորդին:* *4) վճարովի ուսուցման տեղերը համալրվել են անվճար ուսուցման տեղերը համալրվելուց հետո:*							
16	Մրցույթով անցած յուրաքանչյուր դիմորդի համար կազմվել է անձնական գործ, որտեղ ընդգրկվել են ընդունելության կարգով նախատեսված փաստաթղթերը կամ փաստաթղթերի պատճենները, հիմնական կրթության վկայականի կամ միջնակարգ կրթության ատեստատի բնագիրը կամ նոտարական հաստատումով (վավերացված) պատճենը:	ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. №254-Ն հրաման, 46-րդ կետ				**2**	փաստաթղթային	
17	Հաստատության ղեկավարը հրամանագրված դիմորդների հետ կնքել է պայմանագիր, որտեղ ամրագրվել են ուսանողի ընտրած մասնագիտությունը, ուսուցման ձևը, սովորելու տարիների տևողությունը և Հաստատությունում ուսման վարձի ընդհանուր չափը՝ բաժանված ըստ ուսումնական տարիների: Ուսանողին հանձնվել է պայմանագրի երկրորդ օրինակը, ուսանողական տոմս և առաջադիմության գրքույկ:	ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. №254-Ն հրաման, 49-րդ և 50-րդ կետեր				**1**	փաստաթղթային	

Առողջական պատճառներով կամ այլ բացառիկ դեպքերում ուսանողներին տրամադրվել է ակադեմիական արձակուրդ, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգին և ժամկետներին համապատասխան:		ՆՄ և ՄՄ կրթության մասին ՀՀ օրենք, հոդված 21, 3-րդ մաս				**0**		
18	Հաստատությունում սովորողներին ակադեմիական արձակուրդ տրվել է տնօրենի որոշմամբ մեկ օրացույցային տարի տևողությամբ *(բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի),* սովորողի դիմումի և պետական առողջապահական հիմնարկի բժշկափորձագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա: Սովորողներին ուսումնառության ժամանակահատվածում ակադեմիական արձակուրդ տրվել է ոչ ավելի, քան մեկ անգամ:	ՀՀ ԿԳ նախարարի 22.12.2006թ. №997-Ն հրաման, 2-րդ, 3-րդ, 4-րդ,12-րդ,13-րդ կետեր				**3**	փաստաթղթային	
19	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցմամբ ուսումնառող և կրթաթոշակ ստացող սովորողները ակադեմիական արձակուրդից վերադառնալուց հետո վերականգնվել են ուսուցման նույն համակարգում, իսկ վճարովի ուսուցմամբ ուսումնառող և ակադեմիական արձակուրդում գտնվող սովորողի կրթաթոշակ ստանալու կամ լրացուցիչ վճարումներ կատարելու պայմանները որոշվել է ուսումնական հաստատության և սովորողի միջև կնքված պայմանագրի համաձայն:	ՀՀ ԿԳ նախարարի 22.12.2006թ. №997-Ն հրաման, 5-րդ կետ				**1**	փաստաթղթային	
20	Ակադեմիական արձակուրդում գտնվող սովորողին ուսումնական գործընթացին թույլատրելու (*թույլ է տվել հաստատության տնօրենը, իր հրամանով)* համար հիմք են ծառայել սովորողի դիմումը, պետական առողջապահական բժշկասոցիալական փորձաքննության եզրակացությունը:	ՀՀ ԿԳ նախարարի 22.12.2006թ. №997-Ն հրաման, 9-րդ կետ				**1**	փաստաթղթային	
Ուսումնառությունը որևէ պատճառով անավարտ թողած անձանց ուսանողական իրավունքը վերականգնվել է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգին համապատասխան.		ՆՄ և ՄՄ կրթության մասին ՀՀ օրենք, հոդված 21, 4-րդ մաս				**0**		
21	**Հաստատությունից հեռացված անձի ուսանողական իրավունքը վերականգնվել է հեռացման համար հիմք հանդիսացած հանգամանքը վերանալուց հետո, հետևյալ պայմանների ապահովմամբ՝**	ՀՀ ԿԳ նախարարի 05.12.2011թ. №1278-Ն հրամանի 12-րդ և 13-րդ կետեր				**2**	փաստաթղթային	

	1) Հաստատությունից հեռացված անձի ուսանողական իրավունքը վերականգնվում է ուսումնառած կիսամյակի սկզբից, *2) ուսանողական իրավունքը վերականգնելու դեպքում պետք է պահպանվեն համապատասխան մասնագիտություններով և ուսուցման ձևով Լիազորված մարմնի կողմից տվյալ տարվա համար Հաստատությանը հատկացված տեղերի ընդհանուր թիվը, բացառությամբ՝ ակադեմիական արձակուրդից, նպատակային արձակուրդից, ինչպես նաև տարեկետումից վերադառնալու դեպքերի,* *3) ազատված կամ հեռացված անձի ուսանողական իրավունքը սույն սդուգաթերթի 30.4-րդ կետով սահմանված սկզբունքներին համապատասխան վերականգնելու դեպքում այն չի համընկնում առաջին կիսամյակին:*							
22	Ակադեմիական արձակուրդից, հղիության և ծննդաբերության, մինչև 3 տարեկան երեխային խնամելու համար տրամադրվող նպատակային արձակուրդներից (այսուհետ՝ Նպատակային արձակուրդից) վերադարձած, ինչպես նաև պարտադիր զինվորական ծառայությունից զորացրված (այսուհետ՝ Տարեկետումից) ուսանողի ուսումը շարունակվել է նույն Հաստատությունում և նույն մասնագիտությամբ (մասնագիտացմամբ)՝ Հաստատություն վերադառնալու օրվան հաջորդող այն կիսամյակից և կրթական ծրագրի այն փուլից, որտեղից ուսումն անավարտ է թողել: Նրանց հետ երեք օրվա ընթացքում կնքվել է նոր պայմանագիր:	ՀՀ ԿԳ նախարարի 05.12.2011թ. №1278-Ն հրամանի 7-րդ և 8-րդ կետեր				**2**	փաստաթղթային	
23	Հաստատությունում ուսանողական իրավունքը վերականգնած և այլ մասնագիտություն (մասնագիտացում) տեղափոխված անձի ուսումնառությունն իրականացվել է վճարովի հիմունքով: ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություն ունեցող, անվճար ուսուցման համակարգում ուսումնառած և ակադեմիական ու նպատակային արձակուրդից վերադարձած ուսանողների ուսումնառությունն իրականացվել է վճարովի հիմունքով: Ուսանողների ուսումնառությունն վճարովի հիմունքով իրականացվել է	ՀՀ ԿԳ նախարարի 05.12.2011թ. №1278-Ն հրամանի 9-րդ կետ				**2**	փաստաթղթային	

	նաև այն դեպքերում, երբ տվյալ տարվա համար պետական կառավարման լիազորված մարմնի կողմից Հաստատությանն հատկացվել են միայն անվճար տեղեր և առկա է թափուր տեղ:							
24.1	Հաստատությունից ազատված կամ հեռացված անձին, ինչպես նաև վճարովի ուսուցման համակարգում ուսումնառած և ակադեմիական կամ նպատակային արձակուրդից, ինչպես նաև տարկետումից վերադարձած ուսանողին հնարավորություն է տրվել ուսանողական իրավունքը վերականգնել և անավարտ թողած ուսումը շարունակվել է այն Հաստատությունում, որտեղ նա ուսումը անավարտ է թողնել, կամ իր ցանկությամբ անավարտ թողած կրթական ծրագրին համապատասխան կամ ավելի ցածր կրթական ծրագիր իրականացնող այլ Հաստատությունում, նախընտրած մասնագիտության համապատասխան կիսամյակի սկզբից:	ՀՀ ԿԳ նախարարի 05.12.2011թ. №1278-Ն հրամանի 10-րդ կետ				**1**	փաստաթղթային	
24.2	Նախկինում ուսումնառած և նախընտրած մասնագիտության համար սահմանված ուսումնական պլանների ակադեմիական տարբերությունները չպետք է գերազանցեն 8 առարկան (կամ մոդուլները):	ՀՀ ԿԳ նախարարի 05.12.2011թ. №1278-Ն հրամանի 10-րդ կետ				**0,5**	փաստաթղթային	
24.3	Նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված, սակայն ուսանողի կողմից չուսումնասիրված, չգնահատված առարկաները (մոդուլները) ու առարկաների (մոդուլների) ժամաքանակների 30 և ավելի տոկոս կազմող տարբերությունները համարվում են ակադեմիական տարբերություններ:	ՀՀ ԿԳ նախարարի 05.12.2011թ. №1278-Ն հրամանի 10-րդ կետ				**0,5**	փաստաթղթային	

25.1	Հաստատությունում իր ուսումնառած մասնագիտությամբ (մասնագիտացմամբ) համապատասխան խմբի բացակայության դեպքում անվճար ուսուցման համակարգում ուսումնառած և ակադեմիական կամ նպատակային արձակուրդից, ինչպես նաև տարկետումից վերադարձած ուսանողի ուսանողական իրավունքը վերականգնվել է ուսանողի ընտրությամբ՝ նույն Հաստատությունում այլ մասնագիտությամբ (մասնագիտացմամբ) անվճար ուսուցման համակարգում՝ պահպանելով սահմանված սկզբունքները:	ՀՀ ԿԳ նախարարի 05.12.2011թ. №1278-Ն հրամանի 11-րդ կետ				**1,5**	փաստաթղթային	
25.2	Հաստատությունում ուսումնառության ընթացքում ուսանողի մասնագիտությունը (մասնագիտացումը) փոխվել է, պահպանելով սույն ստուգաթերթի 30.1 կետով սահմանված պայմանները և 30.4-րդ կետով սահմանված սկզբունքները:	ՀՀ ԿԳ նախարարի 05.12.2011թ. №1278-Ն հրամանի 11-րդ կետ				**0,5**	փաստաթղթային	
26	Ուսանողական իրավունքը վերականգնելու համար դիմումը ներկայացվել է կիսամյակների ուսումնական պարապմունքները սկսելուն նախորդող և հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում: Այլ ժամկետում ուսանողական իրավունքի վերականգնումը կատարվել է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համաձայնությամբ: Ուսման վճարը չվճարելու հիմքով հեռացված անձը ազատման/հեռացման/ հրամանի օրվանից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում վճարել է վարձավճարը, ներկայացրել է ուսանողական իրավունքի վերականգնման դիմում և շարունակել իր ուսումնառությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ օրերը համընկել են կիսամյակային քննաշրջանի հետ:	ՀՀ ԿԳ նախարարի 05.12.2011թ. №1278-Ն հրամանի 14-րդ և 15-րդ կետեր				**2**	փաստաթղթային	
27	Ուսանողական իրավունքը վերականգնելու մասին դիմումին կցվել են Հաստատությունից ազատման կամ հեռացման հրամանի պատճենը, ակադեմիական	ՀՀ ԿԳ նախարարի 05.12.2011թ. №1278-Ն հրամանի 16-րդ կետ				**1**	փաստաթղթային	

	տեղեկանքը, կրթության մասին փաստաթղթի բնագիրը կամ դրա նոտարական հաստատումով վավերացված պատճենը, 4 լուսանկար (3x4 չափսի) և այլ անհրաժեշտ փաստաթղթեր:							
28	Դիմումը(ները) ստանալուց հետո՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում Հաստատության ղեկավարը՝ 30.1 կետով սահմանված պայմանների և 30.4-րդ կետով սահմանված սկզբունքների ապահովման դեպքում՝ տվել է ուսանողական իրավունքը վերականգնած ուսանողի ընդունման ժամանակավոր հրաման, որին կցվել են ակադեմիական տարբերությունների ցանկը և դրանց մարման անհատական ժամանակացույցը՝ ուսանողին կցագրելով համապատասխան խմբում և թույլատրելով մասնակցելու ուսումնական պարապմունքներին առավելագույնը մեկ ամիսում ակադեմիական տարբերությունները հանձնելու պայմանով:	ՀՀ ԿԳ նախարարի 05.12.2011թ. №1278-Ն հրամանի 17-րդ, 18-րդ, 19-րդ և 21-րդ կետեր				**1**	փաստաթղթային	
29	**Ակադեմիական տարբերությունների բացակայության կամ ակադեմիական տարբերությունները դրական հանձնելու դեպքում Հաստատության տնօրենը 3 աշխատանքային օրվա ընթացքում հրամանագրել է Հաստատությունում ուսանողական իրավունքը վերականգնած ուսանողին, նրա հետ կնքել է պայմանագիր, կազմել նոր անձնական գործ իսկ ուսանողին տրվել է ուսանողական տոմս, առաջադիմության գրքույկ և նրա հետ կնքած պայմանագրի երկրորդ օրինակը::** **Ուսանողական իրավունքը վերականգնելու մասին դիմում ներկայացրած անձանց թիվը համապատասխան մասնագիտության՝ տվյալ տարվա համար Լիազորված մարմնի կողմից հատկացված ընդունելության տեղերի ընդհանուր թվից ավելին լինելու դեպքում առաջնահերթությունն ըստ հաջորդականության տրվել է՝** *1) ակադեմիական արձակուրդից, նպատակային արձակուրդից,*	ՀՀ ԿԳ նախարարի 05.12.2011թ. №1278-Ն հրամանի 20-րդ, 22-րդ, և 23-րդ կետեր				**1**	փաստաթղթային	

	ինչպես նաև փարեկեփումից վերադարձածին. *2) նախընտրած մասնագիտությամբ աշխատողին.* *3) առավելագույն մասնագիտական սպաժ ունեցողին.* *4) առավել քիչ ակադեմիական փարբերություն ունեցողին.* *5) Հաստատությունից ազատվածներին:*							
30	Հաստատությունը՝ յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ավարտին, Լիազորված մարմնին է ներկայացրել ուսանող(ներ)ի ուսանողական իրավունքի վերականգնման վերաբերյալ հաշվետվությունը՝ նշելով ուսանողական իրավունքի վերականգնման հիմքը, կրթական ծրագիրը, կիսամյակը, ուսուցման ձևը, մասնագիտությունը:	ՀՀ ԿԳ նախարարի 05.12.2011թ. №1278-Ն հրամանի 26-րդ կետեր				**1**	փաստաթղթային	
31	Ուսանողի տեղափոխությունը պետական և (կամ) հավատարմագրված ոչ պետական մասնագիտական ուսումնական հաստատություն իրականացվել է մեկ այլ՝ պետական և (կամ) հավատարմագրված ոչ պետական մասնագիտական ուսումնական հաստատությունից, երկու ուսումնական հաստատությունների տնօրենների համաձայնությամբ (Հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունից և օտարերկրյա ուսումնական հաստատությունից ուսանողի տեղափոխումը պետական ուսումնական հաստատություն կատարվել է նախարարության թույլտվությամբ՝ ընդունող ուսումնական հաստատության տնօրենի ներկայացմամբ):	ՆՄ և ՄՄ կրթության մասին ՀՀ օրենք, հոդված 21, 5-րդ մաս ՀՀ ԿԳ նախարարի 01.10.2010թ. №1455-Ն հրաման, 2-րդ,3-րդ, 8-րդ և 16-րդ կետեր				**2**	փաստաթղթային	
32	Ուսանողի տեղափոխում առաջին կիսամյակում չի կատարվել:	ՀՀ ԿԳ նախարարի 01.10.2010թ. №1455-Ն հրաման, 4-րդ կետ				**2**	փաստաթղթային	
33	Մասնագիտությունների փոփոխությամբ ուսանողի տեղափոխությունը կատարվել է նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված ակադեմիական տեղեկանքում նշված առարկաների (մոդուլների) տարբերությունները 8-ը (*Նախընտրած մասնագիտության գծով հաստատված ուսումնական պլանով ուսանողի ուսումնառություն չանցած, չուսումնասիրած կամ ամփոփիչ ստուգում չանցած առարկաները և առարկաների (մոդուլների) ժամաքանակների 30 և ավելի տոկոս կազմող*	ՀՀ ԿԳ նախարարի 01.10.2010թ. №1455-Ն հրաման, 5-րդ, 6-րդ կետեր				**2**	փաստաթղթային	

	տարբերությունները, համարվում են ակադեմիական տարբերություններ: Օտարերկրյա ուսումնական հաստատությունից ուսանողի տեղափոխման դեպքում հանձնման ենթակա ստուգարքների և քննությունների մեջ չեն մտնում հայագիտական առարկաները) չգերազանցելու պայմանով: Ընդունող ուսումնական հաստատությունը կազմել է ակադեմիական տարբերությունների ցանկը և ուսանողի կողմից դրանց հանձնման անհատական ժամանակացույցը, ժամկետը սահմանելով առավելագույնը մեկ ամիս: Տեղափոխումը կատարվել է, պահպանելով համապատասխան մասնագիտության, տվյալ տարվա համար սահմանված ընդունելության տեղերի ընդհանուր թիվը:							
34	Ուսումնական հաստատությունը ուսումնական տարվա ավարտին պետական կառավարման լիազոր մարմնին է ներկայացրել ուսանողների տեղափոխման վերաբերյալ հաշվետվություն՝ նշելով տեղափոխման հիմքը, կրթական ծրագիրը, ուսուցման ձևը, մասնագիտությունը:	ՀՀ ԿԳ նախարարի 01.10.2010թ. №1455-Ն հրաման, 7-րդ կետ				**1**	փաստաթղթային	
35	Այլ ուսումնական հաստատություն տեղափոխման մասին ուսումնական կիսամյակը սկսելուն նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում ուսանողը դիմում է ներկայացրել իր ուսումնական հաստատության տնօրենին: Տնօրենը եռօրյա ժամկետում գրավոր պատասխանել է ուսանողին՝ կցելով ակադեմիական տեղեկանքը կամ մերժման դեպքում՝ դրա փաստարկված հիմնավորումները:	ՀՀ ԿԳ նախարարի 01.10.2010թ. №1455-Ն հրաման, 10-րդ կետ				**1**	փաստաթղթային	
35.1	Ուսանողի կողմից ընդունող ուսումնական հաստատություն է ներկայացվել. 1) տեղափոխման մասին դիմումը՝ տնօրենի համաձայնության նշագրումով, 2) ակադեմիական տեղեկանքը, 3) ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնությունից օգտվելու իրավունքի վերաբերյալ համապատասխան տեղեկանքը(ները) կամ այդ մասին հավաստող այլ փաստաթղթեր (առկայության դեպքում):	ՀՀ ԿԳ նախարարի 01.10.2010թ. №1455-Ն հրաման, 11-րդ կետ				**0,5**	փաստաթղթային	

35.2	Ուսանողի տեղափոխման դեպքում կրթությունը կազմակերպվել է վճարովի հիմունքներով, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում արտոնություն ունեցող ուսանողների, որոնց կրթությունը շարունակվում է անվճար հիմունքներով, ինչպես և երբ տվյալ տարվա համար սահմանված տեղերի շրջանակում նույն մասնագիտության համար վճարովի տեղ չի սահմանվել:	ՀՀ ԿԳ նախարարի 01.10.2010թ. №1455-Ն հրաման, 11-րդ կետ				**0,5**	փաստաթղթային	
36	Ընդունող ուսումնական հաստատության տնօրենը տվել է ուսանողի ընդունման ժամանակավոր հրաման՝ նշվելով ակադեմիական տարբերությունների ցանկը և դրանց մարման անհատական ժամանակացույցը, մինչև ուսանողի տեղափոխման գործընթացի ավարտը ուսանողին ժամանակավորապես կցագրելով համապատասխան խմբում և թույլատրելով մասնակցելու ուսումնական պարապմունքներին:	ՀՀ ԿԳ նախարարի 01.10.2010թ. №1455-Ն հրաման, 12-րդ, 17-րդ կետեր				**2**	փաստաթղթային	
37	***Ակադեմիական տարբերությունների բացակայության կամ դրանք դրական գնահատականներով հանձնելու դեպքում ընդունող ուսումնական հաստատության տնօրենն ուսանողին տվել է համապատասխան տեղեկանք, որը ուսանողը ներկայացրել է իր ուսումնական հաստատության տնօրենին՝ հրամանով ուսանողի տեղափոխումը եռորյա ժամկետում ամրագրելու համար: Ուսումնական հասատությունը ուսանողին է հանձնել կամ պատվիրակված փոստով առաքել է՝*** *1) տեղափոխման մասին հրամանի պատճենը,* *2) կրթության մասին վկայող փաստաթղթի բնօրինակը,* *3) այլ փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):* *Նախկին ուսումնական հաստատությունում պահպանվել է ուսանողի անձնական գործը, որը ներառում է՝* *1) ուսանողի տեղափոխման մասին հրամանը,* *2) Ընդունող ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքը,* *3) ուսանողի կրթության մասին վկայող փաստաթղթի պատճենը,* *4) ընդունելության քննությունների գրավոր աշխատանքները (դրանց առկայության դեպքում),* *5) ուսանողական տոմսը և այլ փաստաթղթերի պատճենները:*	ՀՀ ԿԳ նախարարի 01.10.2010թ. №1455-Ն հրաման, 13-րդ, 14-րդ կետեր				**1**	փաստաթղթային	
38	*Ընդունող ուսումնական հաստատության տնօրենը համապատասխան փաստաթղթերի բնօրինակները ստանալուց հետո եռօրյա ժամկետում հրամանագրել է ուսանողին, իսկ ուսումնական հաստատությունում կազմվել է ուսանողի նոր*	ՀՀ ԿԳ նախարարի 01.10.2010թ. №1455-Ն հրաման, 15-րդ, 17-րդ				**2**	փաստաթղթային	

	անձնական գործ, որում ընդգրկվել են՝ ուսանողի կրթության մասին վկայող փաստաթուղթը, ակադեմիական տեղեկանքը, ընդունման հրամանի պատճենը և ուսանողի հետ կնքած պայմանագիրը: Ուսանողին տրվել է նոր ուսանողական տոմս և նրա հետ կնքած պայմանագրի 2-րդ օրինակը:	կետեր						
39	**Մեկից ավելի մասնագիտական կրթությունն իրականացվել է անկախ ուսուցման ձևից, մասնագիտական հիմնական կրթական ծրագրին զուգահեռ (այսուհետ՝ զուգահեռ կրթություն) սկզբունքով ինչպես իր ուսումնառած/ուսումնառող/, այնպես էլ մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող այլ հաստատություններում վճարովի ուսուցմամբ *(բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություն ունեցող ուսանողների)*՝ պահպանելով հետևյալ պայմանները.** *1) պահպանվել է համապատասխան մասնագիտության տվյալ տարվա համար սահմանված ընդունելության տեղերի ընդհանուր թիվը,* *2) դրանցում կրթություն ստանալու ձևերը տարբեր են (չի արգելվում առկա և այլ ձևերի զուգակցումը),* *3) ընդունելության կամ կրթական ծրագրին մասնակցության համար հավակնորդին ներկայացվող մուտքային պահանջները բավարար են:* *Ուսումնառությունն ավարտվում է պետական ամփոփիչ ատեստավորմամբ և շրջանավարտին տրվում է համապատասխան որակավորում:*	ՀՀ ԿԳ նախարարի 12.03.2011 թ. №194-Ն հրամանի 2-րդ, 5-րդ, 6-րդ, 11-րդ, 15-րդ կետեր				**2**	փաստաթղթային	
40	Հավակնորդը երկրորդ մասնագիտական կրթություն է ստացել՝ 1) ընդհանուր հիմունքներով՝ իր ցանկությամբ չկրկնելով ուսումնառած մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաները (մոդուլները), եթե դրանք համընկնում են նախընտրած մասնագիտության ուսումնական պլանի հետ, 2) ուսումնառած / ուսումնառող / կրթական ծրագրի հիմքով՝ նախընտրած մասնագիտության համապատասխան կիսամյակից:	ՀՀ ԿԳ նախարարի 12.03.2011 թ. №194-Ն հրամանի 7-րդ, 8-րդ, 12-րդ և 13-րդ կետեր				**1**	փաստաթղթային	
41	**Մեկից ավելի զուգահեռ մասնագիտական կրթություն ստանալու համար հավակնորդն ուսումնական տարվա սկզբին (ըստ կրթության ձևի) կամ կիսամյակին նախորդող աշխատանքային 15 օրվա ընթացքում**	**ՀՀ ԿԳ նախարարի 12.03.2011 թ. №194-Ն հրամանի 9-րդ, 14-րդ, 16-րդ և 17-րդ կետեր**				**1**	փաստաթղթային	

	դիմում է ներկայացրել հաստատության ղեկավարին, կցելով հետևյալ փաստաթղթերը. *1) կրթության մասին վկայող ավարտական փաստաթուղթը՝* *ա. հիմնական կրթության վկայականի կամ միջնակարգ կրթության ատեստատի նոտարական հաստատումով (վավերացված) պատճենը, կամ մասնագիտական (այդ թվում՝ բարձրագույն) կրթության դիպլոմը և ներդիրը,* *բ. տնօրենի (ռեկտորի) կողմից հաստատված ակադեմիական տեղեկանքը,* *2) չորս լուսանկար (3x4 չափսի),* *3) կարգով սահմանված այլ անհրաժեշտ փաստաթղթեր:*						
42	**Մեկից ավելի մասնագիտական կրթություն ստանալու համար հավակնորդների դիմումները քննարկելու նպատակով հաստատության տնօրենի հրամանով ստեղծվել է ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) որի նախագահը հաստատության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալն է, իսկ անդամները՝ համապատասխան մասնագիտության գծով դասախոսական կազմի ներկայացուցիչները:** *Դիմումները քննարկվել են կիսամյակների ուսումնական պարապմունքները սկսելուն հաջորդող երկու շաբաթների ընթացքում, որի արդյունքում, մրցութային հավասար պայմանների դեպքում, առաջնահերթությունն ըստ հաջորդականության տրվել է՝* *1) նախընտրած մասնագիտությամբ աշխատող հավակնորդին,* *2) առավելագույն մասնագիտական սպաժ ունեցող հավակնորդին,* *3) կրթության որակավորման ավելի բարձր աստիճան ունեցող հավակնորդին,* *4) կրթության միևնույն որակավորման աստիճան ունեցող ավարտական փաստաթղթի ներդիրում նշված առարկաների առավելագույն միջին գնահատական ունեցող հավակնորդին:*	ՀՀ ԿԳ նախարարի 12.03.2011 թ. №194-Ն հրամանի 18-րդ և 19-րդ կետեր				**2**	փաստաթղթային	
43	Հաստատության ղեկավարը, հանձնաժողովի եզրակացության հիման վրա, տվել է ուսանողի ընդունման ժամանակավոր հրաման, որին կցվել է ակադեմիական տարբերությունների ցանկը և դրանց մարման անհատական ժամանակացույցը: Հաստատության ղեկավարը ուսանողին ժամանակավորապես կցագրել է համապատասխան խմբում և թույլատրել մասնակցելու ուսումնական	ՀՀ ԿԳ նախարարի 12.03.2011 թ. №194-Ն հրամանի 20-րդ և 21-րդ կետեր				**2**	փաստաթղթային	

	պարապմունքներին, ակադեմիական տարբերությունները առավելագույնը մեկ ամսում հանձնելու պայմանով: Հաստատության ղեկավարը եռօրյա ժամկետում հրամանագրել է ակադեմիական տարբերությունները դրական հանձնած ուսանողին:							
44	Տնօրենը (ռեկտորը) ուսանողին(ներին) հրամանագրելուց հետո հնգօրյա ժամկետում պետական կառավարման լիազոր մարմնին է ներկայացրել ամբողջական տեղեկատվություն մեկից ավելի մասնագիտական կրթություն ստանալու համար ընդունվածների վերաբերյալ:	ՀՀ ԿԳ նախարարի 12.03.2011 թ. №194-Ն հրամանի 22-րդ կետ				**1**	փաստաթղթային	

Հարցաշարում «Այո», «Ոչ» և «Չ/պ» պատասխանների նշանակությունը

1.	«Այո»՝ առկա է, համապատասխանում է, բավարարում է	V		
2.	«Ոչ»՝ ոչ, առկա չէ, չի համապատասխանում, չի բավարարում		V	
3.	«Չ/Պ»՝ չի պահանջվում			V

Ստուգաթերթը պատրաստվել է հետևյալ նորմատիվ փաստաթղթերի հիման վրա՝

1. **ԿՄՕ** - «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք /ՀՕ-297, 1999թ./
2. **ՆՄ և ՄՄ կրթության մասին ՀՀ օրենք** - «Նախնական մասնագիտաան (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք /ՀՕ-164-Ն, 2005թ./
3. **ՀՀ ԿԳ նախարարի 12.03.2011 թ. №194-Ն հրաման -** «Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը հաստատելու մասին»
4. **ՀՀ ԿԳ նախարարի 01.10.2010թ. №1455-Ն հրաման -**«Ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգը հաստատելու մասին»
5. **ՀՀ ԿԳ նախարարի 05.12.2011թ. №1278-Ն հրաման -** «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքների վերականգնման>> կարգը հաստատելու մասին»

6. **ՀՀ ԿԳ նախարարի 22.12.2006թ. №997-Ն հրաման** - «ՀՀ պետական հավատարմագրված նախնական, միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական ուսումնական հաստատություններում (մագիստրոսներին) և ասպիրանտներին ակադեմիական արձակուրդ տալու կարգը հաստատելու մասին»

7. **ՀՀ ԿԳ նախարարի 05.04.2012թ. №254-Ն հրաման –** «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը հաստատելու մասին»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ